



SEF INTERNATIONAL

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնը: Սպառողական վարկավորման մասնագետ («Վեդի» մասնաձյուղ)

Աշխատանքի վայրը: ք. Վեդի

Աշխատանքի նկարագիր:

Մասնաձյուղի սպառողական վարկավորման ծառայությունների ապահովում, սեփական պորտֆելի արդյունավետ կառավարում և նախանշված ծավալների ապահովում, աջակցություն վարկային մասնագետներին՝ վարկերի ձևակերպման և պորտֆելի կառավարման գործում, ստորաբաժանման փաստաթղթավարության կազմակերպում:

Սպառողական վարկավորման մասնագետի հիմնական աշխատանքային պարտականություններն են

- Ապահովել հաճախորդներին նախնական տեղեկատվությամբ՝ կազմակերպության վարկավորման պայմանների և տրամադրվող այլ ծառայությունների վերաբերյալ՝ համաձայն կազմակերպության ներքին կանոնակարգերի
- Ծանոթանալ վարկառուի և նրա պահանջների հետ
- Ստանալ հաճախորդից վարկավորման համար անհրաժեշտ նախնական փաստաթղթերը
- Վերլուծել հաճախորդի ներկայացրած փաստաթղթերի և տվյալների հիման վրա նախնական հայտը
- Ապահովել անհրաժեշտ փաստաթղթավարությունը վարկի տրամադրման համար
- Մուտքագրել տվյալները ինֆորմացիոն համակարգ
- Ապահովել վարկային մասնագետների և մասնաձյուղի կառավարչին աջակցություն՝ մասնաձյուղի գործառնությունների իրականացման գործում

Պահանջվող մասնագիտական գիտելիքները

- Բարձրագույն կրթություն
- Ֆինանսական հաստատությունում աշխատանքային փորձը առավելություն է
- MS Office ծրագրային փաթեթի լավ հմտություններ (Word, Excel)
- AS Bank համակարգի իմացությունը առավելություն է
- Փաստաթղթերի հետ աշխատելու կարողություն
- Գործնական շփման էթիկա
- Սահուն հայերենի իմացություն, ռուսերենի և անգլերենի իմացությունը ցանկալի է
- Հաճախորդների և կազմակերպության աշխատակիցների հետ արդյունավետ համագործակցելու կարողություն
- Ճնշման տակ աշխատելու կարողություն

Դիմելու կարգը

Ցանկացողները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները cvvedi@sef.am էլեկտրոնային հասցեին:

Խնդրում ենք նամակում նշել՝ ինչ պաշտոնի համար եք դիմում՝ սպառողական վարկավորման մասնագետ և նշել մասնաձյուղը:

Ինքնակենսագրությունների ընդունման վերջնաժամկետն է **05 մարտի 2018թ.:**